



ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ՊՐԱԳԱՅՈՒՄ

Հունիս ամսվա 13—18 օրերին, Չեխոսլովակիայի մայրաքաղաք Պրագայում գումարվեց խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական համաշխարհային առաջին կոնգրեսը, որին մասնակցելու հրավիրվել էր նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին:

Հայ Եկեղեցու պատգամավորությունը անձամբ բարեհաճել էր գլխավորել Վեհափառ Հայրապետը, Պատգամավորության կազմում էին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, գերաշնորհ Տ. Գնել Եպիսկոպոս Ճերեճյանը, հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը, արժանապատիվ Տ. Ռուբին քահանա Մարտիրոսյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիրոսյանը:

Պատվիրակությունը Մոսկվա մեկնեց հունիսի 6-ին, կրեքշարթի օրը:

Առավոտյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի միաբանություններ, Մայր Տաճար է առաջնորդվում և Իջման Ս. Սեղանի առաջ աղոթելուց հետո, ճանապարհվում դեպի Երևանի օդանավակայանը:

Վեհափառ Հայրապետին և պատգամավորության ճանապարհում են Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը, դերագույն Հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունը, քահանայից դասը և հավատացյալներ:

Երևանի ժամանակով ժամը 7.35-ին, ինքնաթիռը, կտրվելով Հայրենի հողից, ուղղություն է վերցնում դեպի Մոսկվա և երկու ժամը 5-ին վայրէջք կատարում Վնուկովոյի օդանավակայանում:

Վեհափառ Հայրապետին օդանավակայանում դիմավորում են, հանուն Մոսկվայի և համայն Ռուսաց Ալեքսի Պատրիարքի,

Սերգեյ Եպիսկոպոսը և Մատթեոս քահանան, Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարզև վարդապետ Գևորգյանը և եկեղեցական խորհրդի անդամներն ու հայ հավատացյալներ:

Վեհափառ Հայրապետին դիմավորում են նաև ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ռյախոնովը և խորհրդի անդամ պր. Սոլովյովը: Վեհափառ Հայրապետը, պատվիրակություն անդամների հետ, առաջնորդվում է «Ուկրաինա» հյուրանոցը, որտեղ հաջորդ օրերին ընդունում է այցելությունները մի շարք այլ պատգամավորությունների, որոնք նույնպես հրավիրվել էին Պրագայի խաղաղության կոնգրեսին:

Ամսի 10-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Մոսկվայում Հայաստանի կառավարության մշտական ներկայացուցիչ պր. Սուրբին Մելքոնյանին, որի հետ ունենում է ջերմ զրույց:

Հունիսի 11-ին, կիրակի, հին տոմարով «Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի»: Մոսկվայի հայոց եկեղեցում սուրբ պատարագ է մատուցում հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը և քարոզում Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի և Ս. Էջմիածնի խորհրդի հոգևոր և ազգային նշանակության մասին:

Երգչախումբը քառաձայն և հաջող երգում է սուրբ պատարագը: Ներկա է հավատացյալների մի սովոր բազմություն:

Հավարտ սուրբ պատարագի, կատարվում է Հայրապետական մաղթանք, Վեհափառ Հայրապետի հանդիսադրություն: Վերջում, նորին Ս. Օծությունը, դառնալով դեպի Իր հավատացյալ զավակները, ողջունում է բոլորին՝ բաշխելով հայրապետական Իր օրհնությունները բոլոր ներկաներին և Մոսկվայի ողջ հայության:

Ամսի 12-ին, երկուշաբթի օրը, Մոսկվայի Շերեմետև օդանավակայանից, Վեհափառ Հայրապետը, պատվիրակության անդամների հետ, մեկնեց Պրագա «ՏՈՒ-104» ինքնաթիռով: Նույն ինքնաթիռով Պրագա մեկնեցին նաև Ռուս Պրովոսլավ Եկեղեցու և Վրաց Պրովոսլավ Եկեղեցու պատվիրակությունները գլխավորությամբ Համայն Վրաց Կաթողիկոս Նորին Սրբություն Եփրեմ Բ-ի, որոնք նույնպես մասնակցելու էին Պրագայի հաղադրության պաշտպանության համաքրիստոնեական համաշխարհային կոնգրեսին:

Շերեմետև օդանավակայանում Սովետական Միության եկեղեցական պատգամավորություններին ճանապարհեցին Ռուս Պրովոսլավ Եկեղեցու, Հայ Եկեղեցու, կրոնական այլ դավանանքների ներկայացուցիչներ և բազմաթիվ հավատացյալներ:

Պատգամավորություններին ճանապարհեցին նաև ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի ներկայացուցիչներ պր. Ռյազանովը, պր. Սոլովյովը և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը:

Պրագայի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին և Հայ Եկեղեցու պատգամավորությանը դիմավորեցին միտրոպոլիտ Յոհաննը, Պրագայի հաղադրության պաշտպանության համաքրիստոնեական համաշխարհային կոնգրեսի գործադիր ժողովի անդամները և մայրաքաղաքի միակ հայ ընտանիքի՝ Պրագայի համալսարանի դասախոս Նշան Մարտիրոսյանի զավակ Հայկ Մարտիրոսյանը:

Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Պրագայի լավագույն հյուրանոցներից մեկը՝ Հոթել Ինտերնացիոնալ:

Կարճ հանգստից հետո, Վեհափառ Հայրապետը, Հայկ Մարտիրոսյանի առաջնորդությամբ, ծանոթացավ Պրագայի պատմական տեսարժան վայրերին, այցելեց Ս. Իգնատիոս, Ս. Նիկողայոս, Ս. Վետա մայր տաճարները, Ս. Բեթղեհեմ մատուռը և հրչակավոր Հրաչյանին:

Ամսի 13-ին, Վեհափառ Հայրապետը, հյուրանոցի Իր հարկաբաժնում, ընդունեց այցելությունը Նիֆոն Սաբա միտրոպոլիտի (Լիբանան, Անտիոքի Քեղզոս պատրիարքի ներկայացուցիչ), Պետրոս արքեպիսկոպոսի (Եթովպական Եկեղեցու պատվիրակության նախագահ), Նիկողիմ արքեպիսկոպոսի (Ռուս Պրովոսլավ Եկեղեցու պատգամավորության նախագահ), միտրոպոլիտ Յոհաննի (Պրագայի ռուսական եկեղեցու առաջնորդ):

Նույն օրը, հունիսի 13-ին, երեքշաբթի, երեկոյան ժամը 8.30-ին, Պրագայում, ժողովրդական պալատի նիստերի դահլիճում, հանդիսավոր իրադրության մեջ բացվեց հաղադրության պաշտպանության համաքրիստոնեական համաշխարհային կոնգրեսը, որին մասնակցում էին 54 երկրներից տարբեր եկեղեցիների և կրոնական համայնքների մոտ 600 ներկայացուցիչներ:

Բեմի խորքում, մուգ սրճագույն թավշյա վարագույրի ֆոնի վրա, սպիտակ շրջանակների մեջ առնվել էր աշխարհի քարտեզը՝ վրան թևատարած խաղաղության աղավնին, շրջանակի վրա լատիներեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն և գերմաներեն «Եւ յերկիր խաղաղութիւն» վերատառույթով:

Ընդարձակ և շքեղ դահլիճում պատգամավորները դրավել էին իրենց տեղերը:

Կոնգրեսը բացվեց սաղմոսերգությամբ, աստվածաշնչական ընթերցումներով և աղոթքներով: Սրտառուչ էր պահը և խորհրդավոր, երբ ամբողջ դահլիճը մեկ մարդու նման, բազմաթիվ լեզուներով, սրտի խորքից աղերսում էր և աղոթում միասիրտ ու միակամ միայն մեկ բան՝ «Եւ յերկիր խաղաղութիւն», «Et in terra pax»:

Կոնգրեսի պաշտոնական և հանդիսավոր բացումից հետո, ընտրվեցին պատվո նախագահություն, ժողովի գործոն նախագահություն, հանձնախմբեր և խմբագրական մարմին:

Վեհափառ Հայրապետը ընտրվեց պատվո նախագահության կազմում և հանդես եկավ հայերեն հետևյալ ողջույնի խոսքով, որը ջերմորեն և հետաքրքրությամբ լսվեց բոլոր պատգամավորների կողմից և նույն պահին թարգմանվեց ռուսերենի, անգլերենի և գերմաներենի:

«Սիրեցյալ երբայրներ Մեր ի Քրիստոս.

Մենք գալիս ենք սուրբաբական Արարատի ստորոտից, հայ ժողովրդի քրիստոնեական հավատի մոտ երկու հազարամյա կենտրոն Սուրբ էջմիածնից, և Ձեզ բոլորիդ բերում ենք եղբայրական սիրո ողջույն, ջերմագին զգացմունքներով լեցուն սրտով:

Լեզուներով միջեկեղեցական այս համաժողովին մասնակցելու հրավեր, Մենք ցանկացանք անձամբ գալ այստեղ, Մեր պատվիրակության անդամների հետ միատեղ, բերելու համար Հայ Եկեղեցու խոսքը:

Եկանք Ձեր մեջ, Ձեր կողքին, ամենայն ուրախությամբ և լավատեսությամբ ու խոր գիտակցությամբ, թե գալիս ենք աստվածահաճո մի մեծ գործի համար, խաղաղության գործի համար: Խաղաղության գործը, ամեն բանից առաջ և բոլորից լինելուց առաջ մեր գործն է, մեր՝ հոգևորականներիս գործը. Քրիստոսի Եկեղեցու գործը: Մանավանդ

մենք՝ հոգևորականներս, երկյուղի և անստուգուրյան մեջ տանջվող այսօրվա մարդկուրյան պարտինք գույց տալ խաղաղության հանապարհը:

Չեռու մեզանից այն մտածումը, թե մենք պարզապես խաղաղության միջազգային շարժման հարողներ ենք, կամ այդ շարժման հետևողներ միայն: Մեր կարծիքով, այդքանը էլ չէ պիտի լինեք մեզ՝ Քրիստոնեյա եկեղեցիներին և քրիստոնեյա հոգևորականներին համար:

Խաղաղության իդեալը մի ամբողջ գաղափարաբանություն է, մարդկային կյանքը ապրելու և գործելու մի աշխարհայաց՝ էապես քրիստոնեական:

Կարելի չէ խաղաղության իդեալը անջատել Քրիստոսի Ավետարանից: Եվ առանց խաղաղության նշմարիտ խոսքի և կենդանի գործի, դժվար թե կարենայինք Քրիստոսի հետևողներ կոչվել: Քրիստոնեությունն ինքը խաղաղության մի առաջնություն է մարդկային աշխարհում: Ընդիմանալ պատերազմին՝ նշանակում է հպատակվել Աստուծո կամսին:

Այսպես է, որ ողջունում ենք Ձեզ սիրով և այսպես է, որ Մենք գալիս ենք Ձեր մեջ և Ձեր կողմին, միացնելու համար Մեր մտածումները, Մեր հույզերը և Մեր նիզերը Ձեր մտածումներին, Ձեր հույզերին և Ձեր նիզերին, ժողովուրդների և պետությունների կյանքի հարիզնի վրա բարձրացնելու և ամրապնդելու համար մեր քրիստոնեական եղբայրությունը, իբրև բարի և հզոր մի գործոն՝ ի պաշտպանություն աշխարհի խաղաղության, ամեն տեղ, բոլոր սահմանների վրա և բոլոր սահմաններից այն կողմ:

Հայ եկեղեցին, խաղաղության գաղափարով և գործով ոգեշնչված, խաղաղության օգտին աշխատող եկեղեցիներից մին է հանդիսանում, անհավելի քան տասն տարիներից վեր: Գեռուս 1949 թվականին Մեր եախարհը, հանգուցյալ Գեորգ Զ Հայոց ծերունակարդ Հայրապետը, առաջին հովվապետներից մեկը եղավ, որ Քրիստոնեական խոր գիտակցությամբ, իր ձայնը բարձրացրեց ընդդեմ պատերազմի, հանուն խաղաղության պաշտպանության: Այդ ժամանակից սկսած տևապես Հայ եկեղեցին, թե՛ Խորհրդային Միության սահմաններից ներս, թե՛ արտասահմանում, որտեղ հայ եկեղեցական կենտրոններ կան— Եվրոպայում, Միջին Արևելքում, Ամերիկայում և Աֆրիկայում— իր ավելի քան չորս միլիոն հավատացյալներով և հոգևորականներով, աղոթում է ու գործում աշխարհի խաղաղության համար այն պայծառ գիտակցությամբ, թե խաղաղության գործը աստվածահատ է և մարդասիրական: Իբրև եկեղեցի և իբրև մի փոքր

ժողովուրդ, որ անցյալում անավար կերպով տուժել ենք մեծերի պատերազմների ընթացքին, ինչպես օրինակ առաջին համաշխարհային պատերազմին, երբ Արևմտյան Հայաստանում նահատակվեցին մեր երկու միլիոն հայ քրիստոնյաները իրենց իսկ պատվան կան Հայրենիքի հողի վրա, և երկրորդ համաշխարհային պատերազմին, երբ մեր ժողովուրդը, եղբայրական մյուս ժողովուրդների հետ միասին, մեծ զոհեր տվեց ի խրեների հետ միասին, պաշտպանության, այսօր մենք մի սրբազան իդեալ ունենք, այն է՝ տեսնել աշխարհում խաղաղ գոյակիսակ, ժողովուրդների միջև բարի կամեցողություն և պետությունների միջև շինարար գործակցություն:

Մարդկային ողբերգություններով լի երկար դարերի պատմության փորձից հետո, ավելի քան երբեք անհրաժեշտ է, որ մեր օրերի մարդիկ, մանավանդ պետությունների ղեկավարներ, եկեղեցիների պետեր և հասարակական գործիչներ, հետևանք մասման և գործելակերպի հին կաղապարներից և համարձակ վնասկանություններ հանդես գան իբրև նոր մարդիկ, նոր ոգով, նոր խոսքով և նոր գործով: Մեր օրերի նշմարիտ նոր մարդը խաղաղասեր և արդար մարդ է, մերկացած հին նախապաշարմունքներից, հին թշնամություններից, մերկացած անհանդուրժող ոգուց, մերկացած իր նմանի աշխատանքը, հողն ու ազատությունը հավիշտակելու կրքերից, կրքեր, որոնք դարեր շարունակ բնորոշել են, ավա՜ղ, հարաբերությունները մարդկային հասարակության և միջազգային կյանքին, ծնունդ տալով անթիվ և անհամար պատերազմների, արհավիրքների և անավար տառապանքների: Եւր մարդը, խաղաղության մարդը, իր նմանի մեջ պետք է տեսնի իր աշխատակցին, իր օգնականին, իր եղբորը:

Մենք, իբրև Հովվապետը Հայ եկեղեցու և արտահայտիչը մեր ժողովրդի սրտի ու կամքի, ողջունում ենք այս մեծ ժողովրդ և կոչ ենք ուղղում բոլոր ազգերին և պետություններին, ի մասնավորի մեծ պետությանը ղեկավարներին, որ կանգ առնեն պատերազմ շրթայագերծելու մտադրությանց առջև և որոնեն խաղաղության հանապարհները՝ համբերությամբ և լավատեսությամբ, որ դադարեցնեն ամեն տեսակի սպառազինություններ և ստումային ու ջրածնային զենքերի փորձարկումները և ջանան միմյանց հասկանալ փոխադարձ գիշումներով, նշմարության և արդարության բարի զենքերով, որ այլևս շքույլատրեն ատելության սերմանումը մարդկանց և ժողովուրդների միջև, այլ միմյանց նահաշեն, միմյանց գնահատեն և միմյանց օգնեն այս աշխարհի վրա, որ իր բազում բա-

րիքներով բոլորին է պատկանում հավասարապես, այս առևի տակ, որ բոլորին է լուսավորում և ջերմացնում հավասարապես, միևնույն Աստուծո օրհնության ներքև, որ բոլորին է բաշխվում հավասարապես:

Հանուն Հայաստանյայց Սուր Եկեղեցու, Մենք օրհնում ենք խաղաղության սրբազան դատը և այս սրբազամար ժողովին մաղթում ենք լիակատար, ամբողջական հաջողություն:

«ԱՍՏՈՒԱԾ ՅՈՒՍՈՅ ԼԻ ԱՐԱՍՅԷ ԶՁԵՂ ԱՄԵՆԱՅՆ ԽԵՂԻՌԹԵԱՄԲ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ, ԱՌԱՒԵԼՈՒՂ ԶԵՂ ՅՈՒՍՈՎ ԶՐՈՒԹԵԱՄԲ ՀՈՒԻՈՅՆ ՍՐԲՈՅ» (Հոռմ. ԺԵ 13): Ամեն»:

Այնուհետև Ռուս Պրովոսլավ Եկեղեցու պատգամավորության նախագահ գերապատիվ Տ. Նիկողոզիմ արքեպիսկոպոսը կարդաց Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի ողջունի խոսքը, որը նույնպես ընդունվեց ջերմորեն:

Պրագայի քաղաքագրուխ պր. Սվապոտկան, հանուն Չեխոսլովակյան Սոցիալիստական Ռեսպուբլիկայի և շեխ ժողովրդի, ողջունեց Պրագայի խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական համաշխարհային կոնգրեսը: Ապա, հանուն Չեխոսլովակիայի խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի, ակադեմիկոս պրոֆ. Մուզար ժոլսկին ջերմորեն ողջունեց կոնգրեսի պատգամավորներին՝ հաջողության բարեմաղթություններով:

Ողջունի խոսքերով հանդես եկան նաև միտրոպոլիտ Նիֆոնը (Լիբանան), արքեպիսկոպոս Բարդան (Հունգարիա), դոկտ. Յագուպ Ստեֆենսը (Գանա), արքեպիսկոպոս Պետրոսը (Եթովպիա), Համայն Վրաց կաթողիկոս Եփրեմը, արքեպիսկոպոս Հուստինիանը (Ռումինական Օրթոդոքս Եկեղեցի), պրոֆ. Տինկը (Չինաստան) և ուրիշներ:

Այնուհետև կոնգրեսի բացման պաշտոնական ճառով և ողջունի խոսքով հանդես եկավ պրոֆ Գ. Գ. Ֆոկելը, ժանրանալով ժողովի առաջ դրված հիմնական միակ հարցի վրա, որ է խաղաղության պաշտպանության սուրբ գործը ամբողջ աշխարհում:

Հունիսի 14-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 9-ին, նույն դահլիճում՝ նովա Ռազնիցայում, կոնգրեսը շարունակում էր իր աշխատանքները:

Ժողովը բացվեց աղոթքով: Առավոտյան եկեղեցական արարողությունը կատարեցին ռուս հոգևորականները: Ապա միաձայն որոշվեց ողջունի և շնորհակալության խոսք ուղղել Չեխոսլովակյան Սոցիալիստա-

կան Ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի նախագահության նախագահ պր. Անտոնին Նովոտնիին:

Այնուհետև ժողովում հրապարակվեց ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահ պր. Խրուշչովին և ԱՄՆ-ի Պրեզիդենտ պր. Ջոն Քենեդիին ուղղված դիմումը խաղաղության պաշտպանության մասին, որն ընդունվեց ցնծագին ծափահարություններով և ուրախ բացականչություններով:

Ապա առավոտյան նիստում «Եւ չեղիք խաղաղութիւն» թեմայի շուրջ ընդարձակ և բովանդակալից ճառով հանդես եկավ Պրագայի ավետարանական համայնքի պատգամավոր պրոֆ. Ժ. Լ. Հրոմադկան:

«Նաղաղություն Քրիստոսի հետքերով» թեմայի շուրջ, հանուն Ռուս Պրովոսլավ Եկեղեցու, Տ. Նիկողոզիմ արքեպիսկոպոսը կարդաց երկրորդ ռեֆերատը:

Սրանով վերջացավ առավոտյան առաջին նիստը:

Երեկոյան ժամը 2-ին, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, հատուկ մի պատվիրակություն պաշտոնական այցելություն սովեց Պրագայում Չեխոսլովակիայի լուսավորության մինիստր դոկտ. Կահուրային:

Երեկոյան ժամը 4-ին կոնգրեսը շարունակում էր իր աշխատանքները:

Երեկոյան նիստում առաջինը հանդես եկավ Վեհափառ Հայրապետը «Նաղաղություն և քրիստոնեական արդարություն» թեմայի շուրջ հետևյալ բովանդակալից և իմաստալից զեկուցմամբ, որի ոռուսերեն թարգմանությունը կարդաց արժանապատիվ Տ. Ռուբեն բահանա Մարտիրոսյանը (միաժամանակ տրվեցին Վեհափառ Հայրապետի ճառի անգլերեն և գերմաներեն թարգմանությունները):

«ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵԱԿՍՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամեն կասկածից վեր է, թե խաղաղության պահպանումը մեր օրերի ամենակենսական հարցն է և ամենաջերմ իղձը մարդկանց և ժողովուրդների: Մենք չենք կասկածում, որ այդ է իղձը նաև պետությանց ղեկավարների, ամեն տեղ:

Սիրելի եղբայրեն' ի Քրիստոս:

Հավաքված ենք այստեղ միասին մտածելու և գործելու, նպատակ ունենալով որոնել և ճշտորոշել ու ամրապնդել այն հանապարհները, որոնք կտանեն դեպի խաղաղ գոյակցությունը և գործակցությունը աշխարհի ժողովուրդների:

վատան ենք, թե չի կարող գտնվել պատասխանատվության զգացմունք և բարոյական խիղճ ունեցող պետական մարդ, հասարակական գործիչ, որն ատումական այս դարաշրջանին, մտառանջված շիկի այս հարցով և չկամենա իր կարելիքի գործ դնել, կանխելու համար աշխարհակործան մի աղետ:

Մենք վատան ենք, որ բոլոր պետությանը ղեկավարները և բոլոր ժողովուրդների առաջնորդները անկեղծորեն կամենում են միջագային հարցերը լուծել խաղաղ միջոցներով, աշխարհի խաղաղության պահպանումը դավանելով որպես մտածելու և գործելու գերագույն կանոն:

Այդ այդպես լինելով, մեր այս պատկանելի համագումարը կդառնա ավելի եշանակալից և ավելի հուսալից:

Իրերի այս կացության մեջ, Քրիստոսի Եկեղեցին անշուշտ որ պետք է ունենա իր հստակ ու վճռական կեցվածքը, պետք է ունենա իր ասելիքի անշփոթ խոսքը, և հանդես գա իր գաղափարական, բարոյական բովանդակ հզորությամբ և իր գործելու բոլոր հնարավորություններով, սուրբ զգացմունքներով լուսավորելու և առաջնորդելու համար մարդկության խիղճը և օգնելու համար բոլորին, և մանավանդ պետությանը ղեկավարներին, ի խնդիր խաղաղության հանապարհներ գտնելու և ամրապնդելու մեծ գործի:

Որդին Աստուծո Քրիստոսին իբրև ճշմարիտ և միակ Գլուխ ունեցող Եկեղեցին, իր երկու հազար տարվա պատմության ընթացքում, թե՛ Արևմուտքում և թե՛ Արևելքում, բազում անգամներ հայտնաբերել է ու շարժման մեջ դրել հոգևոր-բարոյական կենդանի ուժեր, որոնց ներգործումով բարի և փրկարար, բախտորոշ դեր է կատարել ժողովուրդների պատմության մեջ: Մեզանից ամեն մեկը իր Եկեղեցու պատմությունից կարող է գմայելի դեպքեր և դրվագներ հիշատակել, որոնք ցույց կտան Ս. Ավետարանի յույսով առաջնորդվող փառաբան մարդկանց բարեբար և շինարար ներգործումը կյանքի ընթացքի վրա, մանավանդ պատմական հակասաբանական պահերին:

Մեր օրերին, այսպիսի պատմական նոր և մեծ մի հանգրվանի առաջ ենք գտնվում:

Մարդկության և Եկեղեցու առաջ է դրվում պատերազմի և խաղաղության հարցը: Իհարկե, պատմության մեջ առաջին անգամ չէ որ դրվում է նման հարց: Մակայն պետք է ընդունենք, որ առաջին անգամն է, որ նման հարց է դրվում աննախընթացորեն նոր պայմանների մեջ:

Արդ, այսֆան բախտորոշ, այսֆան կենսական կերպով ամբողջ մարդկությանը հու-

զող հարցի առաջ, ինչ դիրք պետք է ընդգրկի Քրիստոնեական Եկեղեցին և ի՞նչ խոսք պետք է ասենք մենք՝ հոգևորականներս, մեր հավատացյալներին և աշխարհին:

Կարծում ենք, որ Մեզ հետ համաձայն կլինեիք բոլորդ, թե մեր խոսքը, այսօր, պետք է լինի մեծ մարգարեի հրամայական պատգամը. «ԵՎԻՅԻ ԱՐԳՄԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՎԱՎՈՒԹԻՒՆ (Եսայի ԼԹ 8):

Ոչ միայն Եսայի մարգարեն, այլ ամբողջ Հին Ովսար և Նոր կտակարանը խաղաղության ավետումն են՝ արդարության զգացմունքով լուսավորված:

Ս. Գրքով ոգեշնչված հավատացյալ և հուսացյալ բազմությունները, դարեր շարունակ, իրենց հայացքը սևեռել են դեպի հեռու ապագա և երազել են, որ կգա մի օր, երբ «ԱՄԻՒՍՄԻՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՎԱՎՈՒԹԻՒՆ շԱՄՐՈՒՐԵՍՅՈՒՆ» (Սաղմ. ԶԳ 11):

Ինչպես սպասելի էր, և արդարև տարբեր կերպ էլ չէր կարող լինել, կյանքի խաղաղության վիճակը օրգանապես և անհրաժեշտորեն կապված է մարդկանց և ժողովուրդների արդար իղձերի և իրավունքների կենսագործման հետ, մարդկանց և ժողովուրդների միջև ներդաշնակ, արդար փոխհարաբերությունների գոյավիճակի հետ:

Անտարակույս, առանց արդարության՝ մարդկային անհատի և հավաքականությանը համար, կարելի չէ ակնկալել ու սպանովել կյանքի մեջ խաղաղ գոյավիճակ: Խաղաղությունը կյանքի առողջ և շինարար ուժերի, ժամանակների հույսովույթով հետզհետե վերանորոգվող և զարգացող ուժերի ներդաշնակ գոյավիճակն է՝ արդարության բարոյական օրենքի յույսի տակ:

Այսպես դատելով, կարծում ենք, թե ուղիղ բանաձևով կլինենք խաղաղության փրկառեական իդեալի իրականացման իղձը, նույնքան փրկառեական՝ արդարության գաղափարի կենսագործման անշուշտամբ:

Հետևաբար. խաղաղության պանդանոսն և ամրապնդման համար անհրաժեշտ պայման է, կամ, եթե ուզում եք՝ պայմաններից մեկը, լուսավորել մարդկանց սրտերը արդարության բարոյական զգացմունքի յույսով, և պատմական ամեն մի ժամանակաշրջանում մարդկային անհատական ու հավաքական կյանքի մեջ ստեղծել հավասարակշռություն և ներդաշնակություն՝ գոյություն ունեցող ու զարգացող ընկերային-հասարակական ուժերի և ձգտումների միջև: Այսպես է, որ կարելի կլինի ստեղծել մարդկային կյանքի մեջ արդար հարաբերություններ և արդար պայմաններ: Մեր ըմբռնումով, այդ յույսը մեզ կտան Ս. Գիրքը և մա-

նավանդ Քրիստոս՝ Որդին Աստուծո և Փրկիչը մեր:

Մեր օրերի գիտության մեծագույն նվաճումները, երբ մարդու իմացական հանճարը բռնիչ է առել հետազոտելու և նվաճելու նյութական տիեզերքը ամբողջ՝ մինչև արևադարձը լույսին, ինչքան հրաշալի պիտի լինե՞ր տեսնել ու հաստատել հաղթանակը նույն մարդու բարոյական հանճարի, նվաճումը խաղաղության և արդարության լույսի, որը դարեր առաջ ծագեց հավատի և հույսի բարձունքներից, աշխարհին բերելով աստվածային պատգամը՝ «Յե՛րեմի՛, ԽԱ՛ՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻՆ ԷՍՏՈՒԹԻՒՆ»:

Մարդու բարոյական հանճարի հաղթանակը կգա միայն խաղաղությամբ, և խաղաղությամբ է որ կսերմանվի արդարության պտուղը (Յակոբ Գ 18):

Խաղաղություն և արդարություն, թե՛ որպես մարդկային իմացական-զգացական ենթակայական հոգեվիճակներ, և թե՛ որպես մարդկային հավաքական կյանքի առարկայական կացություններ, իրար պայմանավորում են, իրար ամբողջացնում և տեսականացնում:

Մի՞թե նույնը չէ հիմնական ըմբռնումը Հին և Նոր Ուխտի, ի մասին արդարության և խաղաղության:

«Ի ՊՏՂՈՅ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԲՈՒՄԱՆԻ ՄԱՌ ԿԵՆԱՅ» (Առակ ԺԱ 30), «ԶԻ ՈՉ Է ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԵՐԱԿՈՒՐ ԵՒ ԸՄՊԵՆԻ, ԱՅՂ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Ի ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ» (Հոով ԺԳ 17), — պատգամում են մեզ Հին Ուխտի մեծ իմաստունը և Նոր Ուխտի մեծ առաջնորդը:

Այս ոգով, մարդ անհատի և ազգերի համար, արդարություն և արդար գոյավիճակ ստեղծվ, Մենք հասկանում ենք կյանքի բնական, կենդանի և ստեղծարար ուժերի անկաշկանդ զարգացման հնարավորություն և այդ հնարավորության ապահովումը բոլորի համար հավասարապես, երաշխավորված, կազմակերպված հավաքական միջոցներով և օրենքներով, որոնցով կարելի կլինի ստեղծել ժողովուրդների կյանքում հավասարակշռություն և ներդաշնակություն ու գործակցություն, ժողովուրդների հասարակական ուժերի և ձգտումների միջև:

Արդարության և արդար գոյավիճակի սկզբունքներ պետք է հարգվի և երաշխավորվի նաև ամեն մի մարդու նկատմամբ, որ ինքը չի հանդիսանում անարդարության պատճառ ուրիշ մարդու նկատմամբ, ուրիշ մարդու կյանքի, հավատի, աշխատանքի, կրթության և ազատ զարգացման նկատմամբ: Մենք խորհում ենք, թե այս իրավունքները ևս պետք է

ապահովվեն ամեն հասարակության մեջ, համապատասխան սոցիալ-տնտեսական կառուցվածքի օրինական և գործնական ռեալ ձևերով:

Ինչպես նյութական տիեզերքի և օրգանական կյանքի մեջ, նույնպես և մարդկային հասարակական կյանքում, ժամանակն է, որ հաստատվեն հավասարակշռության և ներդաշնակության վիճակ և օրենք, ու պահպանվեն նրանք սրբությամբ, որպեսզի այլևս երբեք իրավունքը և արդարությունը բռնությամբ չխափանվեն, որպեսզի խաղաղությունը մնա տեսական վիճակ:

Ազգային և միջազգային իմաստով, մարդկային կյանքի հավասարակշռություն և ներդաշնակություն ստեղծվ, Մենք չենք կամենում հասկանալ սակայն փարագած և կաղապարված մի վիճակ, ինչ որ ծանրակշիռ անտեսումը պիտի լինե՞ր իրականության և պատմական կյանքի զարգացման ընթացքի:

Պարզ է բոլորիս համար, թե մարդկային հասարակական կյանքի ձևերը և նրանց հետ կապված հաստատությունները, հասարակական կյանքի ուժերի հարաբերությունները և այդ բոլորից բխող ու այդ բոլորով պայմանավորված գաղափարական ըմբռնումներն ու օրենքները տեսապես հեղաշրջման և փոփոխման ենթակա են:

Այս դատողությունը նշմարիտ է մանավանդ մեր օրերի համար, երբ ակներև է, թե գտնվում ենք պատմական մի նոր և մեծ հանգրվանի առաջ: Աննախընթաց արագությամբ կերպարանափոխվում են կյանքի պատկերը, մարդկանց և ժողովուրդների գաղափարական հորիզոնը և հասարակական կյանքի կառուցվածքը, իբրև հետևանք գմայելի նվաճումների, տնտեսական կյանքի հզոր զարգացման ու վերելքի, հանդուրդակցությանց միջոցների անհավատալի արագությանց, իբրև հետևանք նաև մարդու ներքին մղումների և նորանոր իդների՝ որոնք ձգտում են կյանքը դարձնելու բոլորի համար ավելի երջանիկ, նյութական ու մշակութային բարիքների ավելի հավասար և արդար բաշխումով:

Գիտությունը և մարդկանց ստեղծարար ձեռքերը հրաշքներ են գործում և նոր հորիզոններ են բաց անում դեպի ապագան:

Մարդկային իմացական հանճարը սկսել է արդեն տիեզերքը նվաճել և մարդիկ սովորել են սանձազերծել այնպիսի նյութական ուժեր, որոնցով կարելի կլինի ամբողջ աշխարհը նույնիսկ բնաշնչել, կործանել:

Չուզահեռ այս զարգացման ընթացքին, խոր և արմատական հեղաշրջումներ են կատարվում ժողովուրդների հասարակական և տնտեսական կյանքի ուժերի և նրանց հա-

բաբերությունների մեջ: Եվ այդ երևույթները ընդհանուր են, նկատելի ամեն տեղ, թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում, առավել կամ նվազ շփերով, այլազան արտաքին դրսևորման ձևերով:

Մեր կարծիքով, այս տեսակետից էականը փիլիսոփայական գաղափարախոսական բանաձևերը չեն, այլ հասարակական ընդհանուր կյանքի կառուցվածքի և ձևերի խոր և հարափոփոխ հեղաշրջումը, որ մեր աչքի առաջ տեղի է ունենում ֆաղափակիրք աշխարհի ժողովուրդների կյանքում ամեն տեղ, զանազան արտաքին կերպերի ներքո, առավել կամ նվազ շփերով:

Սույն բոլոր երևույթների որպես հետևանք, բնական է, որ փոփոխություններ առաջ կգան նաև մարդկանց մտային և զգացական աշխարհի մեջ, նրանց բարոյական ըմբռնումների մեջ, և կյանքը հասկանալու և ապրելու կերպերի մեջ:

Եկեղեցին պետք է անտեսի այս բոլորը: Բայց կարծում ենք, թե Եկեղեցին, իբրև մի հաստատություն, որ ժամանակներից վեր է կանգնած և որի առաքելությունը հավիտենական է, պետք է միջամտի այդ հեղաշրջման ընթացքին, դրսևորելով այս կամ այն նախապիროությունը: Համենայն դեպս, արդարություն ասելով՝ Եկեղեցին չպետք է հասկանա մի որոշ արդարության կերպ, որը կապվել է մի որոշ ժամանակաշրջանի գոյավիճակի հետ, կամ մի որոշ գաղափարախոսության հետ, կամ մի որոշ դասակարգի հետ:

Այս իմաստով Ս. Գիբբը արդարության մի հատուկ ձևի մասին չէ որ մեզ խոսում է, այլ մի արդարության մասին, որը կարող է լուսավորել բոլոր ժամանակները և բոլոր հորիզոնները, անկախ կյանքի անցողական ձևերից:

Արևմտյան մի մտածող ասել է. «Մենք ժամանակաշրջան իր Ավետարանն ունինք»: Այս միտքը Մենք հասկանում ենք այն իմաստով, որ բոլոր ժամանակաշրջանները Ս. Ավետարանը իրենցը կարող են ընդունել, համաձայն իրենց դարի ոգու, համաձայն իրենց դարի կյանքի առարկայական պայմանների:

Գուցե սխալված չենք լինի, եթե ասենք, որ Քրիստոսի Ավետարանը, ավելի քան անցյալում, մանավանդ մեր օրերին է, որ վնասված և փրկարար դեր պիտի կարողանա կատարել, որպես արդարության և խաղաղության ու սիրո ավետիս և պատգամ:

Ավետարանական արդարության ոգին պահանջում է՝

ա) կյանքի արդար և խաղաղ պայմաններում մարդկանց համար հավասարապես, առանց ցեղային, ազգային, կրոնական և այլ խտրության:

բ) կյանքի արդար ու խաղաղ պայմաններում բոլոր անհատ մարդկանց և ժողովուրդների համար, առանց շահագործումների, առանց ավելի զարեղների բռնի միջամտության: Արդարություն կա այնտեղ, որտեղ չկան բռնություն և ճնշում:

գ) Ազգերի ազատ ինքնորոշման իրավունք, որ պետք է նշմարապես սրբությունը հարգվի և դառնա գերագույն կանոն միջազգային հարաբերություններում:

Կարծում ենք, թե մենք բոլորս համոզված պետք է լինենք, թե ցեղային, ազգային և այլ տեսակի խտրականությունների և հալածանքների փաղափարականություն և ազդեցիկ ախտեր՝ գաղութարարական նպատակներով, հանդիսանում են ծանր անարդարությունների արտահայտություններ և ամբողջապես հակասում են քրիստոնեական ու մարդասիրական մեր հասկացություններին:

Հետևաբար, հանուն ազգությունների ազատագրման ու հավասարության, տարվող ամեն աշխատանք և պայքար պետք է համարել անհրաժեշտ և ուղիղ գործելակերպ՝ անարդարությունները վերացնելու աստվածահանո հանապարհի վրա:

Մեր դատողությանց այս շարքի վրա կամենում ենք ավելացնել նաև մի այլ հանգամանակ՝ կապված արդարության կենսագործման հետ և Ձեր ուշադրությունը հրավիրել նրա վրա: Այդ հանգամանքը մեր լավատեսությունը պետք է լինի, թե արդարության իրականացման գործում շատ անգամ բախտորոշ դրական դեր է կատարում ինքը ժամանակը:

Բոլորս փառ գիտենք, որ իրոք աշխարհի վրա շատ ու շատ տեղերում կան դեռևս կացություններ և կյանքի պայմաններ, որոնք սպասում են իրենց արդար լուծման: Այդ անարդարությունները մարդ անհատի դեմ են, կամ հասարակական դասակարգերի դեմ և կամ մանավանդ ազգությունների դեմ:

Աշխարհի վրա շատ տեղերում, առավել կամ նվազ շփերով, կյանքը լեցուն է անկատարություններով, հակասություններով և հակամարտություններով: Ամեն ֆայլափոխի հանդիպում ենք հարցերի և հարցերի: Եվ մինչև ի՞նչ հարցերը դեռևս իրենց լուծման են սպասում, ծնունդ են առնում նորերը՝ տեսական-գաղափարական հարցեր, հարցեր մարդկային անհատական բնության և հավաքականությանց կյանքի հետ առնչվող,

հարցեր տնտեսական, հասարակական, կրոնական. մշակութային; վերջապես և մանավանդ ազգային և միջազգային հին ու նոր հարցեր, բարդություններ, չբավարարված կարիքներ և պահանջներ, շահերի բխումներ, անկարգություններ և ընդհարումներ և այլն, և այլն, որոնք դրսևորվում են հանախ այլազան կերպերով, առավել կամ նվազ սաստկությամբ:

Անշուշտ մեր իդձր պետք է լինի, որ պետությանը ղեկավարեն և միջազգային բարձր կազմակերպություններ, կարողանան արագ կերպով լուծել այդ հարցերը, որպեսզի բոլորի համար արդարություն լինի և վերահան խաղաղության սպառնացող կացությունները: Սակայն կարծում ենք, որ որոշ հարցերի նկատմամբ էլ պետք է լինենք համբերատար, որպեսզի, ինչ որ մարդիկ չեն կարողանում այսօր լուծել, ինքը ժամանակը լուծի ազգային: Այս լավատեսությունը պետք է նկատել անհրաժեշտ տվյալ խաղաղության ամրապնդման հանապարհին: Ավելի լավ է, որ որոշ հարցերի պարագային արդարությունը մի փշ ուշանա, քան թե պատերազմ լինի: Եվ ավելին: Մենք չենք հավատում, թե մեր օրերի հարցերը կարող են պատերազմով լուծվել: Հավատում ենք, թե միահամուռ երգերով շատ հարցեր կլուծվեն խաղաղ միջոցներով, փոխադարձ բարոնումով և հանդուրժողությամբ ու համբերատար գործակցությամբ: Իսկ որոշ հարցեր ինքը ժամանակը կլուծի: Եվ ժամանակի տված լուծումը, տարակույս չկա, որ լավագույնն է և արդարագույնն է:

Այսօր կան հարցեր, որոշ մարդկանց կամ որոշ պետությանց համար շատ սուր քվացող, և որոնք սակայն իրականում գուցե այդպիսին չեն, այլ անհատական կամ հավաքական կրիքների կամ խմբակցական անցողական շահերի և կամ նույնիսկ նախապաշամունքների արդյունք են, որոնք ըստ ինքյան ժամանակավոր բնույթ են կրում: Գուցե, եթե այդ պահը անցնի, տվյալ հարցը ինքնին այլևս դադարի «հարց» լինելուց: Ինչքան օրինակներ կարող ենք հիշատակել Եվրոպայի և Արևելքի պատմությունից— կրոնական վեճեր և պատերազմներ, ազգամիջյան պայքարներ, հալածանքներ, տնտեսական հակամարտություններ և բախումներ, որոնք վաղուց դադարել են կյանքի երևույթ լինելուց, որովհետև կյանքը ինքը փոխվել է և ժամանակը ինքը լուծել է այդ հարցերը: Այսօր այդ բոլորը պատմական տխուր հիշատակներ են միայն, որոնք մեզ ատում են, թե այդ մարդիկ իզուր են իրար կոտորել, իզուր են այդքան տառապանք պատճառել և այդքան ավերներ գործել:

Պատերազմները ընդհանրապես դժբախտություն են բերել թե՛ հաղթողներին և թե՛ պարտվողներին: Պատերազմական ոգին, ռազմամտությունը, ատելությունը երբեք չեն կարողացել արդարություն սերմանել ու հաստատել: Միայն խաղաղությունը և սիրո ոգին եղել են միշտ շինարար, ստեղծարար և աղբյուր մարդկային երջանկության:

Հետևաբար, հանուն ավետարանական մարդասիրության և արդարության ոգու, Մենք կրկնում ենք այստեղ Մեր իդձր, որը հայտնեցիք այս համագումարի բացման նիստում Մեր ողջույնի խոսքում. «Ժողովուրդների և պետությունների ղեկավարները թո՛ղ կանգ առնեն պատերազմ շղթայգերծելու մտադրությանց առջև և որոնեն խաղաղության հանապարհները՝ համբերությամբ և լավատեսությամբ, թո՛ղ դադարեցնեն ամեն տեսակի սպառազինություններ և ատումային ու ջրածնային զենքերի փորձարկումները և ջանան միմյանց հասկանալ փոխադարձ զիջումներով, նշմարտության և արդարության բարի զենքերով, թո՛ղ այլևս չթույլատրեն ատելություն սերմանումը մարդկանց և ժողովուրդների միջև, այլ միմյանց հանաչեն, միմյանց գնահատեն և միմյանց օգնեն այս աշխարհի վրա, որ իր բազում բարիքներով բոլորին է պատկանում հավասարապես, այս առևի տակ, որ բոլորին է լուսավորում և ջերմացնում հավասարապես, միևնույն Աստուծո օրհնության ներքո, որ բոլորին է բաշխվում հավասարապես»:

Այսպես է ահա, որ խաղաղությունը և արդարությունը իրար պիտի հանդիպեն և իրար համբուրեն, իբրև լրումն օրինաց և մարգարեից:

Արդ, Տեր Աստված մեր, հույս հավատացելուց, Դու «ՊԱՀՆԱ ԶԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՄԵՐ, ԶԻ Ի ՔԵՉ 3ՈՒՍՈՎ 3ՈՒՍԱՅԱՔ» (Եսայի ԻԶ 3): Ամեն»:

Երեկոյան նիստում ելույթներ ունեցան նաև ուրիշներ, որոնց թվում պրոֆ. Ինուս (Ճապոն)՝ «Հաց բոլորի համար», Յազուպ Ստեֆենս (Գանա)՝ «Նաղաղութուն և նոր պետություններ» և Ռ. Գ. Ուլման (Անգլիա)՝ «Սառը պատերազմից դեպի մնայուն խաղաղութուն» թեմաներով:

Նաղաղության պաշտպանության համաքրիստոնեական համաշխարհային կոնգրեսի օրակարգում կային նաև բազմաթիվ այլ հարցեր, որոնք նույնպես սերտորեն առնչվում էին աշխարհում խաղաղության պաշտպանության հարցի հետ:

Հունիսի 15-ին և 16-ին կոնգրեսի բոլոր անդամները բաժանվեցին 10 առանձին ենթախմբերի ուսումնասիրելու, քննելու, վիճելու և ընդհանուր ժողովին բերելու իրենց

եզրակացութիւններն ու բանաձևերը օրակարգի որևէ հարցի շուրջ:

Ենթաժողովներում քննութիւն էին դրված հետևյալ հարցերը. խաղաղութիւնը և ազատութիւնը, խաղաղութիւնը և իրավունք, խաղաղութիւնը և արդարութիւնը, խաղաղութիւնը և զինաթափում, խաղաղութիւնը և ատոմական պատերազմ, խաղաղութիւնը և Գերմանիա, խաղաղութիւնը և նոր պետութիւններ:

Հայ Եկեղեցու պատվիրակութիւնի բոլոր անդամները ենթաժողովներում բանավոր և գրավոր ելույթներ ունեցան օրակարգի իրենց նախընտրած որևէ հարցի շուրջ:

Հունիսի 17-ին, շաբաթ օր, 10 խմբակներում ավարտվել էին արդեն բոլոր աշխատանքները և յուրաքանչյուր խմբակ կոնգրեսի ընդհանուր նիստին բերել էր իր գրավոր բանաձևերը:

Նիստերի նույն դահլիճում կայացավ հաղաղութիւնի պաշտպանութիւնի համաքրիստոնեական համաշխարհային կոնգրեսի վերջին՝ եզրափակիչ նիստը:

Ներկա էին բոլոր պատգամավորները, թղթակիցներ, դիտորդներ:

Եզրափակիչ նիստը բացվեց նորից հասարակաց աղոթքներով և սաղմոսերգութիւնով:

Նիստի բացումից անմիջապես հետո, կոնգրեսի նախագահութիւնը պաշտոնապես հրապարակեց ՍՍՌՄ Միջխտրների Սովետի նախագահ պր. Ն. Ս. Խրուշչովի պատասխանը ժողովի 14 հունիս թվակիր դիմումին, որն ընդունվեց հոտնկայա, որոտընդոստ ծափերով:

Ապա ընթերցվեց Զինտուլովայան Սոցիալիստական Ռեսպուբլիկայի նախագահ պր. Անտոնին Նովոտնիի պատասխանը կոնգրեսի 14 հունիս թվակիր ողջույնի խոսքին, որը նույնպես ընդունվեց բուռն ծափահարութիւններով:

Այնուհետև հրապարակվեց Պրագայի հաղաղութիւնի պաշտպանութիւնի համաքրիստոնեական համաշխարհային կոնգրեսի Բանաձև-պատգամը որպես պատմական մի կարևոր փաստաթուղթ, ուղղված աշխարհի բոլոր եկեղեցիներին և ժողովուրդներին, ուր սպվում է, թե Պրագայում գումարված հաղաղութիւնի պաշտպանութիւնի համաքրիստոնեական համաշխարհային առաջին կոնգրեսի տարբեր եկեղեցիների, տարբեր դավանութիւնների պատկանող ավելի քան 600 քրիստոնյաներ, հավատարիմ քրիստոնեական իրենց հավատին և համոզմունքներին, դատապարտում են պատերազմը և պաշտպանում քրիստոսանվեր խաղաղութիւնը, «Այնքան խաղաղութիւն», «Քրեանի խաղաղարարաց, զի նո՛քա ուղիք Աստուծոյ կոչեցին», և կոչ են անում երկրաշնորհի բո-

լոր քրիստոնյաներին ու ժողովուրդներին՝ հավատալու քրիստոսավանդ այս պատգամին և համատեղ աշխատանքով միասին հարթելու ճշմարիտ և մնայուն խաղաղութիւնի աստվածահաճո ճանապարհը:

Բանաձևը դիմում է նաև բոլոր պաուլամենտներին և կառավարութիւններին, ջերմորեն պահանջելով, որ վերջ տրվի սպառազինութիւնների մրցավազքին, սառը պաշտպանութիւնները միջազգային վերատեսրազմի հրահրմանը, միջազգային վերահսկողութիւն սահմանվի լրիվ, ամբողջահսկողութիւն սահմանվի լրիվ, ամբողջական զինաթափման համար և ազգերի միջև հաստատվի փոխադարձ վստահութիւն, համազործակցութիւն և խաղաղութիւն, շեղութիւնի, խաղաղ գոյակցութիւնի սկզբունքների վրա հիմնված, միջազգային դաշինքների ստեղծումով, տնտեսական, քաղաքական, մշակութային տարբեր սիստեմաների և ավանդույթներին մեջ ապրող բոլոր պետութիւններին միջև:

Բանաձևի հրապարակումից հետո, սկըսվեց մտքերի փոխանակութիւն, որին մասնակցեցին շատ պատգամավորներ:

Վերջում, ընդհանուր ծափահարութիւնների տակ, միաձայն ընդունվեց ներկայացված բանաձևը:

Այնուհետև կատարվեց գոհաբանական աղոթք՝ կոնգրեսի աշխատանքների հաջող և արդյունավետ ավարտման առթիվ:

Շաբաթ օրը, երեկոյան ժամը 8-ին, Պրագայում իր աշխատանքներն ավարտեց հաղաղութիւնի պաշտպանութիւնի համաքրիստոնեական համաշխարհային առաջին կոնգրեսը:

Կիրակի, հունիսի 18-ին, պատգամավորութիւնի մի մասը ներկա եղավ սուրբ պատարագի մատուցմանը ռուսաց եկեղեցում, իսկ մյուս մասը՝ կիրակնօրյա մասնավոր արարողութիւն՝ Պրագայի մեթոդիստների Ս. Բեթղեհեմ մատան մեջ:

Նույն օրը երեկոյան, տրվեց պաշտպանութիւնների պատգամ:

Երկուշաբթի, հունիսի 19-ին, արդեն մեկնել էին պատգամավորական որոշ խմբեր:

Երեքշաբթի, հունիսի 20-ին, Մոսկվա մեկնեց նաև կոնգրեսի հայ պատգամավորութիւնը, Վեհափառ Հայրապետի գլխավորութիւնով:

Չորեքշաբթի, հունիսի 21-ին, ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետը Մոսկվայում այցելեց ՍՍՌՄ Միջխտրների Սովետին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ պր. Պուլինին և եկեղեցական հարցերի շուրջ զրույց ունեցավ նրա հետ:

Նույն օրը, երեկոյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը «Պրագա» հյուրանոցում նախագահեց Պրագայի կոնգրեսի մասնա-

կից և Մոսկվա այցելած արտասահմանյան մի շարք պատվիրակությունների պատվին կազմակերպված ճաշկերույթին:

Սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը: Այնուհետև ներկաներից շատերը ելույթներ ունեցան խաղաղության մասին, շեշտելով Արևելքի և Արևմուտքի միջև կրոնա-եկեղեցական կապերի էլ ալելի սերտացումը, հօգուտ խաղաղության և եկեղեցիների համագործակցության:

Հունիսի 23-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 9.30-ին, Վեհափառ Հայրապետը, «ԻԼ—18» ինքնաթիռով, ժամանեց Երևան, պատգամավորության անդամների հետ:

Նորին Ս. Օծությունը ջերմորեն դիմավորեցին Հայկական ՍՍԻ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռի միաբանության անդամները, Երևանի քահանայից դասը և վանքի պաշտոնեությունը:

Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով առաջնորդվեց Մայր Տաճար: Իջման Ս. Սեղանի առաջ կատարվեց գոհաբանական մաղ-

թանք: Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը բարի զալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին հանուն Մայր Աթոռի միաբանության, Հոգևոր Ծեմարանի դասախոսական կազմի և ուսանողության ու վանքի պաշտոնեության:

Վեհափառ Հայրապետը Իր գոհունակությունը և շնորհակալությունը հայտնեց ջերմ ընդունելության համար և համառոտակի խոսեց Պրագայի Խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական համաշխարհային կոնգրեսի նշանակության մասին՝ աշխարհում խաղաղության պաշտպանության և ապահովության բնագավառում:

Իր խոսքի վերջում Վեհափառ Հայրապետը սրտագին բարեմաղթություններ արեց խաղաղության վերջնական հաղթանակի համար բոլոր երկրներում, բոլոր երկինքների տակ:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Վեհարան, ուր օրհնեց բոլոր ներկաներին:

Բարի զալուստ մեր սիրելի Վեհափառ Հայրապետին:

